

ԵՂՐԱՑԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐՈՒԹ

ՎՐԱՑԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ «ՄԱՐԲՍԻՉՄԸ ԵՎ ԼԵՋՎԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՆԵՐԸ»
ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովի գիտական սեսիան

Հունիսի 20-ին բացվեց Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովի գիտական սեսիան՝ նվիրված Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանձարնղ աշխատության հրապարակման տարեդարձին:

Սեսիան բաց արեց Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ ակադեմիկոս Ի. Ս. Մուսխելիշվիլին:

Ժողովի մասնակիցները մեծ խանդավառությամբ ընտրեցին պատվավոր նախագահություն՝ Համկ(բ)ՊԿԿ Քաղբյուրոյին, ընկեր Ստալինի գլխավորությամբ, ինչպես և Վրաստանի Կ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկ. Ջարկվիանուն:

Սեսիայի առաջին նիստում լսվեցին Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, պրոֆ. Ա. Շանիձեի զեկուցումը «Վրացական բայի բազմապատիկ ձևերի զարգացման ուղիները, քննված Ի. Վ. Ստալինի՝ լեզվաբանության ուսմունքի հիման վրա» թեմայով, դոցենտ Ս. Ծերեթելու զեկուցումը «Մարքս-լենինյան փիլիսոփայության մի քանի հարցեր լեզվի վերաբերյալ ստալինյան ուսմունքի լույսի տակ» թեմայով, դոցենտ Վ. Բերիձեի զեկուցումը «Ի. Վ. Ստալինի՝ լեզվաբանության վերաբերյալ աշխատությունները և վրաց արվեստի պատմության մի քանի խնդիրները» թեմայով:

Սեսիայի մասնակիցները մեծ ոգևորությամբ ողջույնի հեռագիր ուղարկեցին գիտության մեծ կորիֆեյ ընկեր Ի. Վ. Ստալինին:

Ողջույնի հեռագրեր ուղարկվեցին նաև ընկերներ Լ. Պ. Բերիային և Կ. Ն. Ջարկվիանուն:

Գիտական սեսիայի երկրորդ նիստում լսվեց երեք զեկուցում— Վրացական ՍՍՌ ԴԱ-ի իսկական անդամ պրոֆեսոր Դ. Ախվիզիանը զեկուցեց «Հիմնական բառային ֆոնդի և արմատական բառերի փոխհարաբերությունն ու հնչյունաբանության տեղը ստալինյան լեզվաբանության մեջ» թեմայով, Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ պրոֆ. Վ. Թոփուրիան՝ «Լեզվաբանության քննադատները և նրանց փոխհարաբերության խնդիրը Ի. Վ. Ստալինի լեզվաբանական ուսմունքի լույսի տակ» թեմայով, Ի. Գիգինեիշվիլին՝ «Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքի գիտա-հետազոտական ինստիտուտների աշխատանքի արդյունքները՝ լեզվի վերաբերյալ ստալինյան ուսմունքի հիման վրա» թեմայով:

Ի. Գիգինեիշվիլին պատմեց այն մասին, թե Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքի ինստիտուտները ինչպես են վերակառուցել իրենց աշխատանքը լեզվաբանության վերաբերյալ ստալինյան ուսմունքի հիման վրա:

Վրացական ՍՍՌ ԴԱ-ի լեզվաբանության ինստիտուտի աշխատակիցների ուղադրության կենտրոնում են լեզվի էության և զարգացման, նրա հիմնական բառային ֆոնդի ու բերականական կառուցվածքի խնդիրները:

Ուսումնական վրաց Գրականության ինստիտուտում մշակվում են գրականագիտության հրատապ պրոբլեմները Ի. Վ. Ստալինի լեզվաբանական աշխատանքների լույսի տակ:

Փիլիսոփայության ինստիտուտի գիտական աշխատողները մշակում են դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի մի շարք խնդիրներ Ի. Վ. Ստալինի լեզվաբանական աշխատությունների հիման վրա:

Ակադեմիայի գիտական աշխատողները մեծ օգնություն են ցույց տալիս մանկավարժներին՝ մի շարք առարկաների դասավանդումը լեզվի ստալինյան ուսմունքի լույսի տակ վերականգնելու գործում: Այսպես, օրինակ՝ Հոգեբանության ինստիտուտի աշխատակիցները միջնակարգ դպրոցի համար վերամշակել են հոգեբանության դասագիրքը, կազմել են հոգեբանության մեթոդական դասագիրք և մշտական սեմինար են կազմակերպել Թբիլիսիի միջնակարգ դպրոցների հոգեբանության դասատուների համար:

Տնտեսագիտական ինստիտուտում մեծ աշխատանք է տարվում ուսանողների վրացերեն և վրացերենից ռուսերեն տնտեսագիտական տերմինաբանություն կազմելու ուղղությամբ:

Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի Հասարակական գիտությունների բաժանմունքի գիտական սեկտոր

Երբ օր տեղեց Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի Հասարակական գիտությունների բաժանմունքի գիտական սեկտոր, որը նվիրված էր Ի. Վ. Ստալինի լեզվաբանական ուսմունքին: Սեկտորի նիստերը տեղի ունեցան Քութայիսում:

Սեկտորի բաց արեց Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի վիցե-պրեզիդենտ պրոֆ. Ակակի Շանիձեն:

Սեկտորի մասնակիցները լսեցին մի շարք զեկուցումներ Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի իսկական անդամներ՝ Վ. Թոփուրիան զեկուցեց «Լեզվաբանության բնագավառները և նրանց փոխհարաբերության հարցը Ի. Վ. Ստալինի լեզվաբանական ուսմունքի լույսի տակ», Դ. Ախվեղիանին՝ «Հիմնական բառային ֆոնդի և արմատական բառերի փոխհարաբերությունը Ի. Վ. Ստալինի լեզվաբանական ուսմունքի լույսի տակ», Ա. Շանիձեն՝ «Մի քանի լուսաբանումներ վրաց լեզվի պատմությունից Ի. Վ. Ստալինի դրույթի շուրջը՝ բերականական կառուցվածքի դանդաղ փոփոխման մասին»:

Ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր-պրոֆ. Քեթո Լոմթաթիձեն զեկուցեց Ի. Վ. Ստալինի լեզվաբանական ուսմունքի հիմնական գրույթների մասին: Դոցենտ Դ. Մելիքիշվիլին կարդաց հետևյալ զեկուցումը՝ «Վրաց ժողովրդի հնագույն պատմության մի քանի հարցեր Ի. Վ. Ստալինի լեզվաբանական աշխատությունների լույսի տակ»: Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Լ. Սաթիանին՝ «Ի. Վ. Ստալինի վաղ շրջանի վրացերեն գրած ստեղծագործությունների լեզուն և ոճը»:

«Ի. Վ. Ստալինի լեզվաբանական աշխատությունները և վրաց արվեստի պատմության մի քանի հարցեր» թեմայով զեկուցեց դոցենտ Վ. Բերիձեն: Վրաց դրական լեզվի մասին զեկուցեց ֆիլոլոգ. գիտութ. թեկնածու դոցենտ Ի. Դիզինիշվիլին:

Սեկտորի մասնակիցները անսահման ոգևորությամբ ողջունել հեռագիր ուղարկեցին ժողովուրդների իմաստուն առաջնորդ, գիտության մեծ կորիֆեյ ընկեր Ի. Վ. Ստալինին:

Սեկտորի Քութայիս քաղաքի հասարակայնության մեջ մեծ հետաքրքրություն առաջ բերեց:

Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի Լեզվաբանության ինստիտուտում

Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» դարագրված կազմող աշխատության լույս ընծայման նշանակալից տարեդարձը զգալի նվաճումներով դիմավորեց Վրացական ՍՍՌ ԳԱ-ի Լեզվաբանության ինստիտուտը, որի գիրեկտորն է Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի իսկական անդամ պրոֆ. Ա. Չիքոբավան: Անցած մեկ տարվա ընթացքում Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի Լեզվաբանության ինստիտուտը զգալի աշխատանք է կատարել մենագրություններ գրելու և ստալինյան լեզվաբանական ուսմունքի դրույթները գիտական ու մանկավարժական պրակտիկայում կենսագործելու ուղղությամբ:

Լեզվաբանության ինստիտուտի ուղղորդության կենտրոնում են եղել լեզուների էության և նրանց դարգացման խնդիրները՝ Ի. Վ. Ստալինի լեզվաբանական աշխատությունների տեսանկյունով: Հենց այդ խնդիրներին էր նվիրված Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի Լեզվաբանության ինստիտուտի հատուկ գիտական սեկտոր, որը կայացավ 1950 թվի դեկտեմբերին: Երկու օր տևող այդ սեկտորում ինստիտուտի ավագ գիտական աշխատակիցները կարդացին մի շարք հետաքրքրական զե-

կուցումները Դեկտեմբերի 15-ին Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի իսկական անգամ պրոֆ. Ա. Չիրքոբաժան զեկուցեց թիւ 1. Ստալինի աշխատությունները լեզվի մասին և նրանց նշանակությունը սովետական լեզվաբանության համար թեմայով: Նա հանգամանորեն կանգ առավ Բ. Վ. Ստալինի լեզվաբանական աշխատությունների վրա և ցույց տվեց նրանց նշանակությունը սովետական լեզվաբանության համար: Այդ նույն օրը ինստիտուտի ավագ գիտական աշխատակից պրոֆ. Քենթո Լոմթաթիձեն զեկուցեց «Լեզվի զարգացման օրինաչափության հարցը Ի. Վ. Ստալինի լեզվաբանական ուսմունքի տեսակետից» թեմայի շուրջը և Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի իսկական անգամ պրոֆ. Վար. Թոփուրիան՝ թիւ 2. Ստալինի ուսմունքը լեզվի բերականական կառուցվածքի մասին թեմայով:

Դեկտեմբերի 16-ին լսվեց երեք զեկուցում: Ինստիտուտի ավագ գիտական աշխատակից դոցենտ Թին. Շարաձենիձեն զեկուցեց թիւ 3. Մաուի՝ լեզուների սոցիալ դասակարգումը Ի. Վ. Ստալինի ուսմունքի լույսի տակ թեմայով, որտեղ զեկուցողը ելնելով ստալինյան լեզվաբանական ուսմունքի դիրքերից, ուժեղ քննադատության ենթարկեց Մաուի այսպես կոչված «լեզվի նոր ուսմունքը» և ցույց տվեց նրա սխալ, հակագիտական էությունը: Ստալինյան լեզվաբանական ուսմունքի դիրքերից Ն. Մաուի իսալոգորման տեսությունը ուժեղ քննադատության ենթարկեց ինստիտուտի ավագ գիտական աշխատակից պրոֆ. Ս. Ժղենտին, իր թիւ 3. Մաուի իսալոգորման տեսությունը ստալինյան լեզվաբանության լույսի տակ զեկուցման մեջ: Ինստիտուտի ավագ գիտական աշխատակից դոցենտ Գ. Ռոզաժան՝ զեկուցեց «Արխագերեն-չերքեզերեն լեզուների պատմության վուդար-մատերիալիստական հասկացման մի քանի նմուշների մասին» թեմայով:

Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի Լեզվաբանության ինստիտուտի երկրորդ գիտական սեսիան, նվիրված Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմի վերաբերյալ լեզվաբանության մեջ» հանճարեղ աշխատության լույս ընծայման տարեդարձին, տեղի ունեցավ 1951 թ. հունիսի 15—16-ին:

Այս սեսիայում կարգացված զեկուցումները նվիրված էին լեզվի զարգացման ինդիրեններին: Սեսիան ներածական խոսքով բաց արեց Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի իսկական անգամ, Լեզվաբանության ինստիտուտի դիրեկտոր պրոֆ. Ա. Չիրքոբաժան: Ույնուհետև ինստիտուտի ավագ գիտական աշխատակից դոցենտ Թին. Շարաձենիձեն զեկուցեց թիւ 1. Մեշյունինովի կատարած լեզուների ստադիալ դասակարգումը ստալինյան լեզվաբանական ուսմունքի լույսի տակ թեմայով: Զեկուցողը ցույց տվեց, որ Ի. Մեշյունինովի փորձը՝ այսպես կոչված լեզվի «նոր ուսմունքի» հիման վրա լեզուների ստադիալ դասակարգում կատարելու վերաբերյալ, վերջացավ լիակատար պարտության: Ինստիտուտի ավագ գիտական աշխատակից դոցենտ Վ. Փանշվիձեն զեկուցեց թիւ 2. Յա Մաուի բառատարր վերլուծության գիտական սնանկությունը Ի. Վ. Ստալինի լեզվաբանական աշխատությունների լույսի տակ թեմայով: Լեզվ-լեզուն լսարանը հուլիսի 16-ին հետաքրքրության լսեց Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի իսկական անգամ պրոֆ. Ա. Չիրքոբաժանի զեկուցումը՝ «Պատմականության և լեզվի պատմական զարգացման տեսության հարցի մասին» ստալինյան լեզվաբանական ուսմունքի լույսի տակ թեմայով: Զեկուցողը նշեց, որ լեզվաբանության նվաճումները կապված են տարբեր լեզուների հնչյունաբանության, ձևաբանության, շարահյուսության և բառապաշարի պատմական ուսումնասիրության հետ: Բայց պատմական լեզվաբանությունը մինչև օրս չունի լեզուների պատմական զարգացման տեսություն, դեռևս մշակված չէ պատմա-համեմատական վերլուծության մեթոդիկան, որը լուրջ թերություններ ունի: Պատմական լեզվաբանության տեսությունը հետ էր մնում և հետ է մնում լեզվաբանության նվաճողական պրակտիկայից: Սովետական լեզվաբանությունը, որը հիմնվում է Ի. Վ. Ստալինի լեզվաբանական հանճարեղ աշխատությունների վրա, կոչված է պաշտպանելու պատմականության սկզբունքները և մշակելու լեզվի պատմական զարգացման տեսությունը: Բ. Վ. Ստալինի աշխատություններում դրված է լեզվի զարգացման գիտական, մարքսիստական տեսության հիմքը, որտեղ՝ ա) պարզված է լեզվի զարգացման հիմքը, բ) որոշված է լեզվի զարգացման քնույթի հիմնական հարցը, գ) տրված է լեզվի տարբեր կողմերի անհամաչափ զարգացման ֆորմուլան, դ) բացահայտված է տարբեր դարաշրջանների համար տարբեր օրինաչափությունների գոյության հնարավորությունը, ե) պարզված է լեզուների խաչավորման պրոցեսի էությունը և խաչավորման դերը լեզուների զարգացման մեջ, զ) ընդգծվում է ցույց է տրված լեզուների զարգացման ներքին օրենքների սահմանման մեծ նշանակությունը: Այս բոլոր դրույթների մենագրական ուսումնասիրությունը սովետական լեզվաբանության անհետաձգելի խնդիրներն են: Սեսիայում լսվեց նաև կրտսեր գիտական աշխատակից էլիզբար Լամթաձենի զեկուցումը հետևյալ թեմայով՝ «Լեզվի զարգացման մի քանի հարցեր ստալինյան լեզվաբանական ուսմունքի լույսի տակ»:

Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի Հեղվարանության ինստիտուտը պատրաստել է «Իրերա-Կովկասյան լեզվաբանություն» աշխատությունների նոր (3-րդ) հատորը՝ նվիրված Ի. Վ. Ստալինի լեզվաբանական աշխատությունների լույս ընծայման տարեդարձին։ Ինստիտուտը պատրաստում է լեզուների դասակարգման հարցերին նվիրված ընդարձակ մի մենագրություն։

Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի Հեղվարանության ինստիտուտը հատուկ աշխատանք է ծավալել լեզվաբանության ներածության դասագիրքը կազմելու ուղղությամբ։ Պատրաստվում է նաև ընդհանուր լեզվաբանության 1-ին և 2-րդ մասերի նոր վերամշակված հրատարակությունը։

Հեղվարվելով ընկեր Ի. Վ. Ստալինի ցուցումներով, նաև այն դիտողություններով, որ ընկ. Զարկվիանին արեց Բրիլիսի քաղաքային 20-րդ պարտիական կոնֆերանսում վրաց գրական լեզվի զարգացման մասին, Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի Հեղվարանության ինստիտուտը ուժեղացրեց իր աշխատանքները ժամանակակից վրաց գրական լեզվի ուսումնասիրման բնագավառում։ Ինստիտուտը խորը ուսումնասիրության է ենթարկում հատկապես Քարթլու և Կախեթի բարբառները, որոնք, ինչպես հայտնի է, հիմք են հանդիսացել ժամանակակից վրաց գրական լեզվի ձևավորմանը։ Սկսված են քարթլու բարբառի բառարան կազմելու աշխատանքները։

Հսկայական աշխատանք է տարվում Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի Հեղվարանության ինստիտուտում՝ ժամանակակից վրաց գրական լեզվի բացատրական բառարան կազմելու ուղղությամբ։ Բառարանը, որ լույս է տեսնելու 8 հատորով և կազմված է լինելու 125 հազար բառից, հագեցվում է գրական լեզվի նմուշների փաստարկներով, որոնք բաղված են մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատություններից, վրաց գրականության կլասիկների և սովետական գրողների ստեղծագործություններից։ Արդեն տպված և վաճառքի են հանված «Վրաց լեզվի բացատրական բառարանի» 1-ին և 2-րդ հատորները։

Ինտենսիվ աշխատանք է տանում Հեղվարանության ինստիտուտը նաև վրաց գիտական տերմինաբանության համամիացման ուղղությամբ։ Տարվում են պոլիտեխնիկական տերմինաբանական բառարանի կազմման աշխատանքները։ Նախապատրաստական աշխատանք է տարվում դյուղատնտեսության տարրեր բնագավառների տերմինաբանական բառարաններ կազմելու ուղղությամբ և այլն։

Ռուս-վրացերեն և վրաց-ռուսերեն բառարաններ

Վրաց. ՍՍՌ Գիտությունների ակադեմիան ձեռնարկեց ռուս-վրացերեն և վրաց-ռուսերեն բառարանների հրատարակությանը։ Բառարանների ծավալը նախատեսված է 60 հազար բառի սահմաններում, 35 հազար տիրաժով։

Բառարանների պատասխանատու խմբագիր է հաստատված Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի իսկական անդամ պրոֆ. Ի. Ս. Ախվլեդիանին։

Ռուս-վրացերեն բառարանը լույս է տեսնելու 1952 թ. երրորդ եռամսյակին, իսկ վրաց-ռուսերեն բառարանը՝ 1953 թվի երրորդ եռամսյակին։

Շուտով սկսվելու է բառարանների բաժանորդագրությունը։

Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի պրեզիդիումը պլանավորեց նաև «Մեծ ռուս-վրացերեն» և «Մեծ վրաց-ռուսերեն» բառարաններ կազմելու և հրատարակելու աշխատանքները։

«Մեծ ռուս-վրացերեն» բառարանի հրատարակությունը նախատեսված է ավարտել 1954 թվին, իսկ «Մեծ վրաց-ռուսերեն բառարանը»՝ 1956 թվին։

Ա. ՄՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

Ի. Վ. ՄՏԱԼԻՆԻ «ՄԱՐՔՍԻԶՄԸ ԵՎ ԼԵՋԱԼԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ»

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅՄԱՆ ՏԱՐԵԳԱՐՁԸ

Ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանձնարեղ աշխատության լույս ընծայումից հետո Ադրբեյջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում և գիտական այլ հիմնարկներում զգալի աշխատանք կատարվեց ն. ձա. Մատի հակապիտակա տեսության մերկացման և սովետական լեզվաբանության ու այլ գիտությունների առաջ դրված հիմնական հարցերի բնութագրման ուղղությամբ։ Լեզվաբանության, գրականագիտության, փիլիսոփայության,